

Իեղիին կար. — Կան մի քանի սուներներ և մի տեսակ բացիլ, որոնք կաթին դեղին գոյն են տալիս, բայց դեռ չեն ուտում նախիրուած: Եթէ եռացրած կաթը խառնենք դեղին կաթի հետ՝ 2½ ժամ անցնելուց յետոյ մահարդւում է: Կաթը դեղին գոյն կարող է ոտանալ նաև այն ժամանակ, երբ կովերն ուտում են ստեպլինի, քրքումի, խաշնդեղի տերեւներ, և այլն: Այս դէպքում ևս պէտք է վերոյիշեալ միջոցները ձեռք առնել:

Կաթը երբեմն կարող է նաև մանուշակի գոյն ոտանալ, երբ կովերն ուտում են աղուեռագի, մատիդեղ, կմըշարուկ, սև ցորեն ևլն:

Կալչուն կար. — Կալչուն կամ թել թել դարձող կաթը թանձրը է լինում: Եթէ շատ թանձր լինի, կճղուի թել թել և կամ բոլորովին չի նստի, կամ քիչ, և հեշտութեամբ կմահարդուի: Կաթի կալչունութիւնն ընդհանրապէս սառելուց յետոյ կհասկացուի: Այդպիսի թանձր, կալչուն կաթը անախորժ է լինում, անհամ, սերը պակաս, և նորանից դժուարութեամբ է կարագ ոտացուում: Կաթի այս պակասութեան պատճառներն են՝ կովերի հիւանդութիւնները (կճղակի հիւանդութիւն ևլն), վատ կերը, կաթնատան անյարմարութիւններն և վերջապէս անմաքրութիւնը: Այդպիսի պայմաններում երեւան են գալիս մի շարք այլևայլ տեսակի միկրոօրգանիզմներ, որոնք և փոխում են կաթի բնական յատկութիւնը: Թէպէտ այդպիսի կաթով անմիաս կերպով կարելի է կերակրել անասուններին, այնուամենայնիւ անհրաժեշտ է կովերն առանձին առանձին կթելով իմանալ, թէ արդեօք հոտի մէջ ո՞ր կովի կաթն այդպէս է, և միջոցներ ձեռք առնել. օր. մինչև 65° տաքացնելով կարելի է անմիաս դարձնել այն:

Գ. Գ.



ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ

Երկրագործութեան անկումն Անգլիայում. — Անգլիայում վաղուց է, որ երկրագործութիւնը քայքայւում է, — այն օրից, երբ մեքենաների արդիւնաբերութիւնը, ազատ առևտուրը, և այլն,

Անգլիան գործարանական երկիր դարձրին: Այս փոփոխութիւնը բաւական արագ կատարուեցաւ: Բայց նոր է սկսել անգլիական մամուլը երկիւղ յայտնել այս առթիւ և մասնացոյց անել, որ աղգաբնակութեան 77° ապրում է քաղաքներում և միայն 23° մնում է գիւղերում, այն էլ մեծ մասամբ ծերերն և երեխաները: Լրագիրներից մէկը գուշակում է, որ հեռու չէ այն ժամանակը, երբ ամբողջ Անգլիան մի վիթխարի քաղաք կդառնայ՝ չեն լինի ոչ հողագործներ, ոչ սերմնացաններ, և XX դարում Անգլիայի գիւղական աղգաբնակութիւնը բոլորովին կոչնչանայ: Մի հեղինակ գոչում է. «Երկրագործական Անգլիան կորչում է, մեռնում է...»: Երբեմն մշակուած ընդարձակ տարածութիւնները հիմա ամայի են: Գիւղացի մշակները արհամարհուած են, և մինչև անգամ գիւղացի աղջիկները, որոնք նոյն դասակարգին են պատկանում, արհամարհում են նրանց. այսպիսով նրանք ստիպուած են լինում իրանց միջավայրից հեռանալ. միայն անընդունակները, խեղանդամներն և խաբւեղանները մնում են գիւղում, որոնք և ապագայ սերունդ են պատրաստում: Գնացողները այլ ևս չեն վերադառնալու. չեն գալու նաև քաղաքացիք, որոնք քաղցից մեռնում են, որովհետև այլ ևս ոչ մի բանի ընդունակ չեն: Այն էլ կայ, որ հողերը մեծ մասամբ մարգագետիններ են դարձնում, որոնց պահպանութեան համար այնքան էլ շատ բանուորներ չեն հարկաւոր: Շատ կոմսութիւնների մէջ հող ունենալը շուայութեան առարկայ է, որ միայն մատչելի է ամենահարուստ մարդկանց: Դժուար է աւելի տխուր և աւելի անբնական դրութիւն պատկերացնել, քան ներկայացնում է ժամանակակից Անգլիան երկրագործութեան համար:


Ինչպէս և պէտք էր սպասել, այս հետադոտութիւնը Անգլիայում սհագին աղմուկ հանեց: Քաղաքները սպանեցին գիւղը: Բայց քաղաքներն էլ շատ բան չշահուեցան. թուանշանները պերճախօս կերպով ցոյց են տալիս, որ Անգլիայի մեծամեծ քաղաքներում տեղափոխութիւնն ու մրցութիւնը այն է արել, որ թէպէտ այս քաղաքներում առևտուրը ծաղկած վիճակի մէջ է, բայց և այնպէս հարիւրից ինը մարդ քաղցից մեռնում են, իսկ 27° քարշ են տալիս իրանց ողորմելի դոյութիւնը, աչքի առաջ ունենալով, որ մի օր էլ իրանք պիտի փողոցներում հոգի տան: Այս սարսափելի պատկերը դղրդացրեց անգլիական պարբերական մամուլը. դանազան գեղեցիկ սոցիալական ծրագիրներ առաջարկուեցան երկիրը կորուստից ազատելու համար:

Վիլհելմ Բ. կայսրը.—Արտասահմանեան մի թերթում տպուել է հոգեբանական մի փոքրիկ տեսութիւն, որի նպատակն է Վիլհելմ Բ կայսրի իսկական ընաւորութիւնը պարզել, Հեղինակի կարծիքով Գերմանիայի կայսրը հոգեբանական հետազոտութեան համար վերին աստիճանի հետաքրքրական անձնաւորութիւն է։ Նրա բոլոր տարօրինակութիւնները բացատրուում են նրա անձնաւորութեամբ, որի պատճառով կայսրը միւսնոյն ժամանակ կարող է կատարել ամենահակասական գործողութիւններ և արտայայտել իրար հակադիր մտքեր և զգացմունքներ։ Ինչպէս որ իւր զգեստի նկատմամբ Վիլհելմ կայսրը արտասովոր բաղձատեսակութեան է հետեւում, օրական տառներէլու ձևի շոր հագնելով, այնպէս էլ հոգեւոր տեսակէտից կայսրը միւսնոյն օրուայ մէջ բաղձատեսակ տրամադրութիւն կարող է ցոյց տալ և լինել միաժամանակ բոլորի և իւրաքանչիւրի և՛ թշնամի և՛ բարեկամ։ Այսպէս, օրինակի համար, կայսրը և՛ անգլիացիներ է և՛ անգլիատեաց։ Անգլիատեաց կայսրը Յրանսլտալի նախագահ Սրիւգերին հեռագիր է ուղարկում և Համբուրգում արտասանած իւր ճառում հասկացնել է տալիս, որ եթէ գերմանական նաւատորմիդը պատրաստ լինէր, Գերմանիան կմիջամէր Անգլիոյ գործերին։ Անգլիացիներ կայսրն երես է դարձնում բռնիներից և քաղցած հնդկիկների օգտին փող է ուղարկում, նկատելով՝ որ «արիւնք ջրից աւելի խիտ է»։ Կայսրի հակաամերիկական զգացմունքները նրան ստիպում են զգուշանալ Միացեալ—Նահանգների զօրանալուց և մինչև անգամ յարաբերութիւնները լարել նրա դէմ, իսկ ամերիկացիներին կողմնակից կայսրը իւր եղբայր Հենրիկոսին Ամերիկա է ուղարկում և ամերիկացիներին շողոքորթում ու հաճոյանում։ Քրանսլայի, Ռուսաստանի, Հոլլանդիայի և ուրիշ երկիրներին հետ ունեցած յարաբերութիւնների ժամանակ կայսրը նոյնպէս հակադիր զգացմունքներ է տածում. այդտեղ ևս նա թէ՛ բարեկամ է և թէ՛ թշնամի միաժամանակ։ Բայց սրանով դեռ չի վերջանում նրա անձնաւորութեան բաղձատեսակ յայտնութիւնների երկար ցուցակը։ Նա իրան կատարեալ քրիստոնեայ կայսր է համարում, հանգիստէր կերպով յայտարարելով, «որ կայսրութեան հիմունքները հանգչում են Աստուծոյ երկիւղի վերայ»։ որ «ով իւր կեանքը հաւատի վրայ չի հանտատում, նա կորած է»։ որ «բարի քրիստոնեաները միայն լաւ ղեկւորներ կարող են լինել»։ Նաև իւրայ քարոզ է արտասանում և յայտնում, որ «Աստուած Գերմանիային դաշնակից է»։ առանձին իմն բարեհաճութեամբ սրբոց կարգն է դասում իւր պապ Վիլհելմ առաջին և Քրիզբրիկոս Մեծին, որով և սաստիկ իրաւանցման մէջ է ձգտել իւր

երկրի ամբողջ հոգևորական աշխարհը.— իսկ միևնույն ժամանակ
Չինաստան գնացող զօրքերին ասում էր, որ թշնամուն ամենևին
չպէտք է խնայել: Վիլհելմ կայսրը երբեմն սոցիալական բարե-
փոխութիւնների պաշտպան է հանգիստանում, երբեմն էլ ոյժի է
գլխում սոցիալական տարակուսանքներ լուծելու համար: Նա
բանաստեղծ է, զրամանք գրող, երաժշտական գրուածքների
հեղինակ, նկարիչ, այլաբանական պատկերներ նկարող. նա միև-
նույն ժամանակ թատերական գրուածքների քննադատ է, ամե-
նակարող և ամենազէտ, որ գերմանացի նկարիչներին գեղարուես-
տի կանոններ է թելադրում, բայց իւր արտագրութիւնների նը-
կատմամբ ոչ մի քննադատութիւն չի ընդունում: Նա բարեպաշ-
տական զգացմունքով լցուած ուխտ է գնում Երուսաղէմ,
բայց միևնույն ժամանակ սիրահաճ խօսքեր է շուայում այն ուղ-
թանի հասցէին, որի ձեռքերը հայ քրիստոնէաների արիւնով են
ներկուած: Նա զօրապետ է, որ հրաման է տալիս աշխարհիս
վերայ եղած ամենատհաբիւ զօրքին. նա ծովագնաց է, որ լաւ
գիտէ Գերմանիայի ծովային գործերը իւր բոլոր մանրամասնու-
թիւններով և հրամայում է ռմբակոծել Վենեցուելան: Դժուար
է հետեւել նրա անձնաւորութեան բոլոր կերպափոխութիւններին.
այս բազմատեսակ կայսրներից ո՞րն է իսկական Վիլհելմ Բ., հար-
ցնում է հեղինակը: Սա մի հանելուկ է, որ միայն պատմութիւնը
կհարողանայ լուծել:

Տարօրինակ բոյսեր.— Երբեմն խոպան, քարքարոտ տեղե-
րում այնպիսի փարթամ ծառեր են աճում, որ մարդ ահամայ
մնում է շուարած, թէ գրանք ինչպէ՞ս են աճել և ինչով են
կերակրւում: Արիւմում, Պովկասում և առհասարակ լեռնոտ
տեղերում, ինչպէ՞ս և Քինլանդիայում, շատ անգամ ուղղա-
հայեաց քարաժայռի վրայ անդունդի ծայրին կախւում են ծա-
ռեր, մեծ մատամբ սոճիք, որոնք զարմանք են շարժում: Սրանց
արմատները ճեղքում են քարերը, երբ բոյսի արմատները ջրից
ուռչում և մեծանում են, աներևակայելի ոյժ են ունենում:
Յայտնի է, որ ամուր փակած երկաթէ կաթսայի մէջ սիսեռի
հատիկները ուռչելուց կարող են կաթսան պայթեցնել: Բոյսերի
այս յատկութիւնից օգտւում են մարդաբանները, որպէ՞ս զի
գանդի ամուր կերպով կպած ոսկորները իրարից բաժանեն: Եթէ
գանդի մէջ սիսեռի հատիկներ ածենք և ջրով թրջենք, նրանք
յետոյ աճելով այնպէս ամուր սեղմում են առանձին ոսկորները,

զբ քիչ—քիչ իրարից հեռանում են և բաժանւում: Յայտնի են նաև այնպիսի դէպքեր, երբ սերմն ընկնելով հողի վրայ, հանդիպում է այնտեղ փթած ոսկորների. սերմի արմատները ծակում են ոսկորը և միւս կողմից շարունակում աճել: Տասը տարի առաջ Սեւաստոպոլի մօտ մի սպետակ ակացիա է դանուել, որի արմատները ոսկորների միջով են անցնում: Սրանք բոլորը ապացուցանում են, որ աճող արմատները սարսափելի ոյժ ունին: Այժմ հասկանալի կլինի, որ եթէ ծառի սերմը քամուց տարւում ժայռի փորքիկ ճեղքի մէջ է ընկնում, նա կարող է իւր համար ժայռի մէջ ճանապարհ հարթել, ճեղքը մեծացնել, երբ հարկաւոր է, քարեր պոկել, և եթէ փոշու միջոցով բաւականաչափ հող հաւաքուի այս ժայռի ճեղքի մէջ, այն ժամանակ ծառը աղատ կգարգանայ: Հատ անդամ էլ պատահում է, որ ժայռից քարեր են պոկւում և թափւում ցած, ծառը ծածկում. եթէ արմատից նոր ծէեր դուրս գան և քարի շուրջը ճիւղեր տան, ժամանակին դրանք մեծանալով և զօրանալով իրանց հետ վերև կբարձրացնեն քարերը: Ոչ միայն ընուլթեան, քարերի և ժայռերի հետ, այլ և մարդկանց շինութիւնների հետ էլ ծառերը մրցում են և շատ անգամ յաղթող հանդիսանում: Ցանկապատի շատ ճաղեր երբեմն յենւում են ծառերի ընկն, իսկ ծառն էլ իւր կողմից աշխատում է նրանց իւր մէջն առնել, որ և շատ անգամ յաջողւում է: Միացեալ—նահանգներում վերջին պատերազմների ժամանակ մի խոնաւ դաշտի մէջ մոռացուած մ'նացին պատերազմական սայլեր. այգաեղ սկսեց աճել ուռենի, որ և շուտով ճիւղեր արձակելով շատ սայլեր իւր մէջն առաւ. ճիւղերն անցան անիւների շառաւիղների միջով և բոլորն էլ փչացրին: Երբ եկան և ուղում էին սայլակները բաժանել, ոչ մի կերպ չկաշողացան ամբողջութեամբ հանել նրանց, այլ բոլորը կտոր—կտոր էին եղել:



Ս Ո Ւ Ր Մ Տ Ք Ե Ր

Բաղդդից հրաժարուել կարողանալը—բաղդ է:

Թեթեամիտը մոռանում է—ազնուամիտը ներում է: